ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/51

ք. Երևան «21» նոյեմբեր 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակարար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Բեզիրջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1 235 000 (մեկ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ ա տ ա ր ո ղ**
Երևանի քաղաքապետարան	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 900052473312	Հ/Հ՝ 1660001274300100
ՀՎՀՀ՝ 02593108	ՀՎՀՀ՝ 02707077
Ի. Օսիպյան-----------	Գ. Բեզիրջյան-----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 21 » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/51 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
5	71241200/1284	Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Բաշինջաղյան 1-ին փող. 16 շենքի բակ/ Անհրաժեշտ է մշակել տարածքի բարեկարգման և վերանորոգման նախագիծ, ապամոնտաժել մետաղական հին տիպի խաղասարքերը, հին և վնասված բազրիքները: Կառուցել ճեմուղիներ /ծածկույթը-բետոնյա սալիկ/ և խաղահարթակներ /ծածկույթը-ռետինապատ/, անհրաժեշտ է եզրաքարերը նախատեսել բետոնյա առնվազն 150x300մմ չափերի: Նախատեսել բազրիքների, նստարանների, աղբամանների և խաղասարքերի տեղադրում: Հողի լիցք համահարթեցում և չիմապատում, նախատեսել արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում՝ ցածր բարձրության լուսատուներով /ԼԵԴ լամպեր/: Աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնել առկա իրավիճակը: Նախագիծը ներկայացնել 4 օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով /pdf ֆորմատով/ հետևյալ կազմով 1.ճարտարապետական մաս 2.շինարարական մաս	դրամ	195000	195000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ

		3.նախահաշիվ 4.նախահաշիվ-ծավալաթերթ /հայերեն ու ռուսերեն/ Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման նախագիծը համաձայնեցնել «Երքաղլույս» ՓԲԸ-ի հետ Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից էսքիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ **Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2015թ հ 405Ն որոշմամբ սահմանված որոշման: Անհրաժեշտ է ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետների ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Գծագրային մասը ներկայացնել A-3 ֆորմատով: * Աշխատանքի դիմաց վճարումը կիրականացվի նախագծի փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում:						
6	71241200/1285	Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Արզումանյան փող.10 և12 շենքերի կողային տարածք, թիվ 118 դպրոցի հարևանությամբ / Անհրաժեշտ է մշակել տարածքի բարեկարգման և վերանորոգման նախագիծ:Ապամոնտաժել բետոնե և քարե շարվածքով հենապատը /չվնասելով ստորին մասում գտնվող ավտոտնակների ծածկերը/, կառուցել նոր երկաթբետոնե հենապատ, ճեմուղիներ /ծածկույթը-բետոնյա սալիկ/ և խաղահարթակներ /ծածկույթը-ռետինապատ/: Անհրաժեշտ է եզրաքարերը նախատեսել բետոնյա առնվազն 200x70մմ չափերի: Նախատեսել բազրիքների տեղադրում, նստարաններ և աղբամաններ,	դրամ	245000	245000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ

		խաղասարքեր: Իրականացնել հողի լիցք համահարթեցում: Նախատեսել արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում, ցածր բարձրության լուսատուներով /ԼԵԴ լամպե: Աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնել առկա իրավիճակը Նախագիծը ներկայացնել 4 օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով/ հետևյալ կազմով 1.ճարտարապետական մաս 2.շինարարական մաս 3.նախահաշիվ 4.նախահաշիվ-ծավալաթերթ /հայերեն ու ռուսերեն/ Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման նախագիծը համաձայնեցնել §Երքաղլույս¦ ՓԲԸ-ի հետ Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից էսքիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ **Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2015թ h 405Ն որոշմամբ սահմանված որոշման: Անհրաժեշտ է ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետների ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Գծագրային մասը ներկայացնել A-3 ֆորմատով: * Աշխատանքի դիմաց վճարումը կիրականացվի նախագծի փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում:						

7	71241200/1286	Վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/հատակների ամրացում / Ձեռքբերել շենքի սեյսմիկ վիճակի վերաբերյալ եզրակացություն:Անհրաժեշտ է մշակել շինության վերակառուցման, վերահատակագրման և վերանորոգման նախագիծ. հատակները նախատեսել 2-րդ և 3-րդ հարկերի հատակների ամրացում/մետաղյա չորսու/, մամլոգրանիտի սալեր, առանձնասենյակները լամինատ պարկետ, աստիճանները՝ գրանիտի սալեր:Անհրաժեշտության դեպքում նախատեսել թեքահարթակ (ըստ նորմերի): Աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնել առկա իրավիճակը: Նախագիծը ներկայացնել 4 օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով /pdf ֆորմատով հետևյալ կազմով 1. ճարտարապետական մաս 2. շինարարական մաս 3. նախահաշիվ 4. նախահաշիվ - ծավալաթերթ (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից: Էսքիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ **Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2015թ h 405Ն որոշմամբ սահմանված որոշման: Անհրաժեշտ է ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետների ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Գծագրային մասը ներկայացնել A-3 ֆորմատով:	դրամ	795000	795000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ

		* Աշխատանքի դիմաց վճարումը կիրականացվի նախագծի փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900052473312
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660001274300100
ՀՎՀՀ՝ 02707077

Գ. Բեզիրջյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 21 » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/51 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	71241200/1284	Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Բաշինջաղյան 1-ին փող. 16 շենքի բակ/	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	195000	195000	195000
6	71241200/1285	Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Արզումանյան փող.10 և12 շենքերի կողային տարածք, թիվ 118 դպրոցի հարևանությամբ /	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	245000	245000	245000
7	71241200/1286	Վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/հատակների ամրացում /	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	795000	795000	795000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900052473312
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660001274300100
ՀՎՀՀ՝ 02707077

Գ. Բեզիրջյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

[redacted]

Հավելված 3
« » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/51 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

[redacted]

Հավելված 3.1
« » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽՍՇՁԲ-22/51 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

PAYMENT ORDER RECEIPT

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ Գլխամաս

ՊԿ\ID 416

Ամսաթիվ\Date 14/11/22 12:53

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
1660001274300100	900008000698	AMD	188,000.00

Վճարող\Remitter
«ԷՅՎԻԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902707077

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀՖԻանսների նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ հարյուր ութսունութ հազար դրամ

Նպատակ\Details
ՈՐՍԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՒՄԱՐ// ԵՔ-ՀԲԽՄՍՇՔԲ -22/51

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission	
Գանձում I\Commission I	1660001274300100	AMD	200.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Երկու հարյուր դրամ

Կատարող\Maker Լիլիթ Ռևազյան

Կ.Տ.
ST.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐԱԳԻՐ N 000752 [1383454356]

PAYMENT ORDER RECEIPT

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ Գլխամաս

ՊԿ\ID 416

Ամսաթիվ\Date 14/11/22 12:55

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
1660001274300100	900008000664	AMD	125,000.00

Վճարող\Remitter
«ԷՅՎԻԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902707077

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ

Նպատակ\Details
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՒՄԱՐ// ԵՔ-ՀԲԽՄԱՇՁԲ -22/51

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission	
Գանձում I\Commission I	1660001274300100	AMD	200.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Երկու հարյուր դրամ

Կատարող\Maker Լիլիթ Ռնազյան

Կ.Տ.
ST.

ԿԱՏԱՐՈՂ N.7